Կազմված է 19.06.2020թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

<<ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ>>
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«19» 06 2020թ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.Ասլան Սուրեն Սուրենյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.172.1147560

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

03555392

«22» սեպտեմբերի 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ

<<ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ>>
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ծրագիր

Ընդհանուր դրույթներ

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը գործում է լիբերալ պահպանողականության դաշտում. դա դասական պահպանողականության հոսանքներից մեկն է, որն ավելի լիբերալ մոտեցումներ ունի բարոյական, սոցիալական հարցերում, տնտեսական քաղաքականության մեջ, մասնավորապես՝ պաշտպանում է տնտեսության մեջ պետության միջամտությունը նվազագույնի հասցնելու թեզը:

Ինչո՞ւ «Դեմոկրատական այլընտրանք»: Հեղափոխությունը հաղթել է, սակայն դրա արժեքների կապիտալիզացիայի համար բավարար չեն միայն օրինական ընտրություններն ու լեգիտիմ իշխանությունը. անհրաժեշտ է ունենալ դեմոկրատական այլընտրանք՝ ավտորիտարիզմի ռեստավրացիայի քաղաքական, գաղափարական հիմքերը բացառելու համար: Դեմոկրատական այլընտրանքն այն երաշխիքներից մեկն է, որը պետք է նպաստի ժողովրդավարության անշրջելիությունը երաշխավորող ինստիտուտների ստեղծումը:

Ինչո՞ւ պահպանողական կուսակցություն: Թավշյա հեղափոխությունը շրջադարձային իրադարձություն էր մեր քաղաքական կյանքում, սակայն վտանգավոր է այս իրադարձության ֆետիշացումը, ինչը հղի է Երրորդ հանրապետության արժեքային համակարգի չեղարկման վտանգով: Մեր կարծիքով՝ Երրորդ հանրապետության արժեքային համակարգի հիմքում հենց ազատական ու պահպանողական գաղափարների ներդաշնակությունն է: Խորապես համոզված ենք, որ վտանգավոր է հեղափոխությունն ու Երրորդ հանրապետությունը հակադրելու «գայթակղիչ» թեզը:

«Դեմոկրատական այլընտրանքը» գործելու է ընդդիմադիր դաշտում, սակայն սկզբունքորեն մերժում է բարիկադային մոտեցումները, հասարակությանը «սևերի» ու «սպիտակների» բաժանելու քաղաքականությունը ու խորապես համոզված է, որ քաղաքական համակարգի զարգացման հիմքում պետք է լինեն քաղաքական երկխոսության ու կոմպրոմիսների մեխանիզմը:

Դեմոկրատական այլընտրանքի իմաստը մասնակցային դեմոկրատիան է, ինչը ենթադրում է ակտիվ մասնակցություն բոլոր լեգալ հարթակներում, առաջին հերթին՝ ընտրություններին:

Կուսակցության գաղափարական հենքը

«Դեմոկրատական այլընտարանք» կուսակցության բարձրագույն արժեքներն են՝ Հայաստանի պետությունը, պետական լեզուն՝ հայերենը, մշակութային, քաղաքակրթական ժառանգությունը, քաղաքացին, նրա իրավունքները և ազատությունները, սեփականության իրավունքը: Մեր նպատակն է՝ ժամանակակից դեմոկրատական պետության կայացումը, որի հիմնական արժեքը քաղաքացին է,

ժողովրդավարական և ընտրական ինստիտուտների անշրջելիությունը, սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը, դատական իրապես անկախ համակարգի գոյությունը, կրթական այնպիսի համակարգի ստեղծումը, որը ներդաշնակ լինի համաշխարհային զարգացման միտումներին: Կուսակցության նպատակն է երկրի ներսում մրցակցային միջավայրի ձևավորումը ու մրցունակ պետության կայացումը՝ իր սուբեկտությամբ, որն ակտիվ դերակատարություն պետք է ունենա տարածաշրջանային ու համաշխարհային գործընթացներում:

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը ժամանակակից պահպանողական կուսակցություն է, որը խրախուսում է ինքնավարությունն ու անհատական նախաձեռնությունները տնտեսության, իրավական, գիտության, կրթության, սոցիալական, մշակութային ոլորտներում՝ անհրաժեշտ համարելով նվազագույնի հասցնել պետության ուղղակի միջամտությունը: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում քաղաքական, տնտեսական մենաշնորհների վերացումը, մերժում է պետության զարգացումն ու քաղաքացու ազատությունը կաշկանդող ավտորիտար «գաղափարախոսությունները», հեղափոխականության դրսևորումները:

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունն իրեն համարում է 1988-ի համազգային շարժման, Երրորդ հանրապետության արժեքային համակարգի կրողը՝ ձգտելով գտնել պահպանողական ու ազատական արժեքների ներդաշնակության լավագույն բանաձևը: Կուսակցությունը խրախուսում է էվոլուցիոն զարգացումը՝ մերժելով հեղափոխականության դրսևորումները, ներկայումս կարևորում է հեղափոխության օրակարգի փոխարինումը պետականավարության օրակարգով:

Ներքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներ

- Նոր Սահմանադրության ընդունում՝ քաղաքական և հանրային լայն կոնսենսուսի պայմաններում,
- ընտրական և դեմոկրատական ինստիտուտների ամրապնդում,
- գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների՝ Սահմանադրությամբ նախատեսված անկախության և միմյանց հակակշիռ լինելու վիճակի վերականգնումը, սուպերվարչապետական համակարգից հրաժարումը և խորհրդարանական հանրապետության զարգացումը,
- ժողովրդավարության հաստատումը, խոսքի, մամուլի, խղճի, տեղեկատվություն ստանալու ազատության ապահովումը, բազմակուսակցականության և պառլամենտարիզմի ինստիտուցիոնալ արմատավորումը.
- քաղաքացիական հասարակության ինստիտուտների, տեղական ինքնակառավարման մարմինների, արհմիությունների, ստեղծագործական միությունների, հասարակական կազմակերպությունների ամրապնդումը,
- իրավապահ մարմինների՝ Ոստիկանության և ԱԱԾ արմատական բարեփոխումները, դրանց գործունեության նկատմամբ քաղաքացիական և խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների հաստատումը,

- արդյունավետ պետական համակարգի ստեղծումը, որտեղ պետք է բացառվեն կրկնվող լիազորությունները, կոռուպցիոն քողարկված ռիկսկերը,
- արտագաղթի կասեցման և ներգաղթի խրախուսման համալիր ծրագրի մշակումը,
- դատական համակարգի արմատական բարեփոխումը՝ լյուստրացիայի, վեթթինգի, բարեվարքության կանոնների ներդրման միջոցով,
- Մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունների ընդլայնումը՝ նպաստելով այդ ինստիտուտի սահմանադրական առաքելության կատարմանը,
- պայքար կոռուպցիայի, քրեական և տնտեսական հանցագործությունների դեմ.
- անցյալում կարտարված հանցագործությունների, հատկապես՝ Մարտի 1-ի և Հոկտեմբերի 27-ի լիարժեք բացահայտում,
- տնտեսական հանցագործությունների բացահայտման ընթացքում օրինականության լիարժեք գործադրումը, սեփականության վերաբաշխման իսպառ բացառումը:

Տնտեսական բնագավառ

«Դեմոկրատական այլընրանք» կուսակցությունը Հայաստանի տնտեսության առաջնահերթություններ է համարում բարձր տեխնոլոգիաները, գիտա-կրթական ինդուստրիան, Էներգետիկան, օգտակար հանածոների արդյունահանումն ու Հայաստանում արդյունաբերության կազմակերպումը, գյուղատնտեսությունը, բանկային համակարգը, զբոսաշրջությունը:

Կուսակցությունը կարևորում է տնտեսավարող սուբյեկտների համար հավասար հնարավորությունների ընձեռումը, ազատ մրցակցության ապահովումը և սեփականության անձեռնմխելիության երաշխավորումը: Սեփականության իրավունքն անձեռնմխելի է, և այն պետք է օրենքով խստագույնս պաշտպանված լինի:

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը մրցակցային դաշտի ապահովումը համարում է ՀՀ զարգացման անվերապահ պայման:
Կուսակցությունը խրախուսում է օտարեկրյա ներդրումները՝ դրանք կեսնական համարելով ոչ միայն տնտեսության զարգացման, այլ նաև՝ տնտեսական հարաբերությունների դիվերսիֆիկացիայի և նոր մշակույթի արմատավորման տեսանկյունից:

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը կարևորում է հարկային, մաքսային, ֆինանսավարկային օրենսդրության, համակարգերի բարեփոխումը երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարության համատեքստում:

Արտաքին քաղաքականություն

1998-2018թթ-ին վարված արտաքին քաղաքականության հետևանքով Հայաստանը հայտնվել է տարածաշրջանային և համաշխարհային զարգացումների լուսանցքում՝ միակողմանի կախվածության մեջ հայտնվելով Ռուսաստանից: 2018թ-ին Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխության արժեքներն արտաքին քաղաքականության մեջ անհրաժեշտ չափով չեն կապիտալիզացվել՝ չվերացնելով Հայաստանի միակողմանի կախվածությունը Ռուսաստանից:

Հայաստանի Հանրապետությունն արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիայի անհրաժեշտություն ունի: Հայաստանը բազմավեկտոր, հավասարակշիռ, միևնույն ժամանակ՝ նախաձեռնող արտաքին քաղաքականության անհրաժեշտություն ունի, որը պետք է նպաստի տարածաշրջանում և աշխարհում կայուն խաղաղության և տնտեսական համագործակցության ապահովմանը: Ըստ այդմ.

- Ռուսաստանի հետ անհրաժեշտ է պահպանել ռազմավարական հարաբերությունները, սակայն դրանք պետք է կառուցվեն հավասար գործընկերության, միմյանց ինքնիշխանությունը հարգելու սկզբունքներով: Հայաստանը պետք է շեշտը դինի երկկողմ հարաբերությունների զարգացման վրա,
- Հայաստանի անվտանգության երաշխիքը հարևան երկրների հետ բնականոն հարաբերությունների հաստատումն է: Հայաստանը պետք է հարգի իր միջազգային պարտավորությունները, միևնույն ժամանակ՝ ձեռնպահ մնալով, այսպես կոչված, բլոկային պայքարի թատերաբեմ դառնալուց,
- Արտաքին քաղաքականության մեջ պետք է բացառել կտրուկ քայլերը ու հայ-ռուսական հարաբերություններում տրանսֆորմացիան, եվրասիական ինտեգրացիոն կառույցներում մասնակցության ավելի ազատ ձևաչափերը պետք է իրականացնել անցնցում՝ դա համարելով երկարաժամկետ քաղաքականության հետևանք,
- եվրաինտեգրման խորացումը համարել Հայաստանի արտաքին քաղաքականության կարևոր առաջնահերթություն՝ դա համարելով ուղենիշ նաև ներքին բարեփոխումների համար
- ձևավորել հայ-ամերիկյան քաղաքական, տնտեսական երկխոսության օրակարգ,
- սերտացնել հարաբերությունները Չինաստանի, արաբական աշխարհի հետ,
- ամրապնդել ու խորացնել բարիդրացիական հարաբերություններն անմիջական հարևանների՝ Վրաստանի, Իրանի հետ, կառուցողական ջանքերի գործադրել Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ.
- կարևորել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում քաղաքական կամքի դրսևորումը՝ հանդես գալով արցախահայության ինքնորոշման իրավունքի պաշտպանության, անվտանագության ապահովման և հարցի լուծման փոխզիջումային տարբերակի որոնման դիրքերից.
- Հայաստանի խնդիրն է նպաստել սփյուռքի կրթական, հոգեւոր և մշակութային հաստատությունների ամրապնդմանը Հայաստանը պետք է ձեռնամուխ լինի Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում առաջացած ճգնաժամի հաղթահարմանը, համահայկական օրակարգի ձևավորմանը,

ինստիտուտների ստեղծմանը, այդ ճանապարհին՝ ակտիվ համագործակցելով նաև Հայ Առաքելական եկեղեցու հետ: Արմատական բարեփոխման անհրաժեշտություն ունի «Հայաստան» համահայկական հիմնադրմանը:

Սոցիալական քաղաքականություն

Սոցիալական քաղաքականության հիմքում պետք է ընկած լինեն աղքատության վերացման, սոցիալական արդարության ապահովման, զբաղվածության և ծնելիության խթանման խնդիրները:

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը միջին խավի, այդ կարգավիճակում ինքնադրսևորված, ինչքնաճանաչված մարդկանց կուսակցությունն է ու իր գործունեությունը ծառայեցնելու է միջին խավի ընդարձակմանը՝ դա համարելով երկրի կայուն զարգացման հիմնական երաշխիք:
Պետությունը երաշխավորն է մանուկների և ծերերի բարեկեցիկ գոյության, կարևորում է խոշոր կապիտալի սոցիալական պատասխանատվության ինստիտուտի ձևավորումը, անհատական նախաձեռնությունների խրախուսումը՝ որպես սոցիալական համերաշխության կարևոր դրսևորումներ:

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը կևորում է կենսաթոշակային համակարգում, առողջապահության, կրթության, գիտության ոլորտներում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը՝ դրանք եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: